Տիրույթ	
Որակի տիրույթ	Ռեսուրսներ և ՏՏ
Կապ Որակի ապահովման եվրոպական չափանիշների և ուղենիշների պահանջներին	ՈԱԵՁՈ (ESG)չափանիշներ: 3.3; 3.5; 3.6
Գործողության տարիներ	2021-2025
Հաստատված	ՈԱԱԿ տնօրեն
Տարբերակ	01
Տիրույթի պատասխանատու	ՏՏ պատասխանատու, տնտեսվար

Ռազմավարական նպատակները

- Ապահովել բավարար նյութական ռեսուրսներ՝ ՈԱԱԿ-ի որակի ապահովման ներքին և արտաքին գործընթացներն արդյունավետ իրականացնելու համար:
- Ապահովել, որ ՈԱԱԿ-ն ունենա բավարար բարձրորակ սարքավորումներ, ծրագրային ապահովում և նյութական ռեսուրսներ՝ ամենօրյա աշխատանքի արդյունավետությունն ապահովելու և ՈԱԱԿ-ի գործունեության համար:

Թիրախները

- Տվյալների բազաների (օրինակ ՝ DEQAR, office 365 , փորձագիտական տվյալների բազայի) օգտագործումը ներքին և արտաքին գործընթացներն ավելի արդյունավետ են դարձնում:
- Ցանցի առկայությունը գործընթացների կազմակերպման համար:
- Թարմացված և դասակարգված որակական և քանակական տվյալներ՝ ՈԱԱԿ-ում առկա բոլոր սարքավորումների և ծրագրերի գույքագրման միջոցով:

Գնահատման ցուցիչներ

1. Գրասենյակի գործառույթները պահպանելու համար անհրաժեշտ նյութերի, պարագաների, սարքավորումների և կոմունալ ծառայությունների ձեռքբերման վերաբերյալ տվյալներ:
2. Գույքագրման արդյունքում քանակական և որակական տվյալներ:
3. Սարքավորումների պահեստամասերի պահեստավորում՝ դասակարգված, որակական և քանակական տվյալների արդյունքում:
4. Կանոնակարգված տվյալների բազաներ:

Գործողությունների նկարագրություն

1. Նյութական ռեսուրսների առկայության ընթացիկ գույքագրում և տարեկան պլանավորում(ծրագրային ապահովում, տեխնիկա, կահույք, նյութեր, սարքավորումներ)
2. Ուսումնասիրել գրասենյակային տարածքի միջավայրը և խնդիրների պարագայում վերանորոգել կամ թարմացնել(ջերմաստիճան, լուսավորություն, վերելակի և սանհանգույցի գործառույթ)
3. Թարմացնել ՈԱԱԿ -ում առկա բոլոր սարքավորումներն ու ծրագրերը:
4. Բացահայտել ՈԱԱԿ աշխատակիցների մասնագիտական կարիքները՝ վերապատրաստումներ կազմակերպելու նպատակով:
5. Անցկացնել աշխատակիցների կողմից տեխնիկական, ծրագրային և ցանցային ռեսուրսների անվտանգ, արդյունավետ ու խնայողաբար օգտագործման մշակույթի ձևավորմանը միտված քննարկումներ և այլ անհրաժեշտ միջոցառումներ:

Գնահատում

ՈԱԱԿ սարքավորումների որակի վերաբերյալ տարեկան հաշվետվություն:

Պատասխանատվություն

ՏՏ պատասխանատու, տնտեսվար

Հաշվետվություն

Տարեկան հաշվետվություն

Բարելավում

Այն ռեսուրսները, որոնք բացակայում են, վերանորոգման կամ փոխարինման կարիք ունեն, կբացահայտվեն և կներկայացվեն տնօրենին: Առկա ֆինանսական ռեսուրսների հիման վրա միջոցները կտրամադրվեն:
<u>Տիրույթը կարգավորող փաստաթղթեր</u> • Կահույքի, նյութական ռեսուրսների, համակարգչային և ծրագրային սարքավորումների և գրասենյակային պարագաների գույքագրման փաստաթուղթ • Գնումների պլան

Հաստատված՝
18.10.2021թ.
ՈԱԱԿ տնօրեն
Ռուբեն Թոփչյան